

**CARPET WEAVING ARTSAKH CULTURAL TRADITIONS IN THE NORTH-EAST
OF THE SOUTH CAUCASUS**

A. A. Poghosyan

On the basis of the demographic processes 15-19 cc., The author presents the history of the origin of carpet weaving in the north-eastern regions of the Caucasus. At the same time they reject prevailing concepts, according to which the carpets of this region are considered part of the so-called “Azerbaijani culture.” Based on primary sources and the available facts, the author proves their Armenian origin and, in particular, the tradition of carpet weaving centers linked to the Artsakh and Syunik Province of north-eastern Vaspurakan.

**ԱԳՐԱՐԱՅԻՆ ԳԵՐԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1930 ԹԹ.**

Բ. Մ. ԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին կապիտալիստական արտադրահարաբերությունները, թեկուզ և շատ դանդաղ, թափանցում են նաև հայկական գյուղը, գյուղացիական մանր տնտեսությունները սկսում են կորցնել իրենց կայունությունը:

Հայաստանում ավելորդ բանվորական ուժի կուտակման գործընթացն ընթանում էր բավականին դանդաղ և թաքնված, չնայած այն բանին, որ արդեն գոյություն ունեին կապիտալիստական արդյունաբերական օջախներ, բնակչության հիմնական զանգվածը շարունակում էր զբաղվել գյուղատնտեսությամբ: Հայաստանը հիմնականում չի անցել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման փուլը, այդ իսկ պատճառով հարաբերական գերբնակչությունը գերազանցապես դրսևորվել է սոսկ ագրարային գերբնակչության ձևով, որն արտահայտվում էր արտագնացությամբ:

Արտագնացությունը Հայաստանի գավառներից մեծ չափերի հասավ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Այսպես, 1912-1914 թթ. միայն Երևանի նահանգից արտագնացության է դիմել 119558 մարդ¹: Իսկ Ջանգեզուրից 1913 թ. միայն Բաքու է մեկնել 9454 մարդ²: Դա բավականին մեծ թիվ է այն ժամանակվա շուրջ մեկ միլիոն բնակչություն ունեցող Հայաստանի համար: Ընդ որում արտագնացների մեծ մասը Հայաստանի արդյունաբերության թույլ զարգացածության հետևանքով մեկնում էր նրա սահմաններից դուրս:

¹ Տե՛ս **Վ. Խոջաբեկյան**, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1928-1978), Երևան, 1979, էջ 68:

² Տե՛ս “Экономический вестник ССР Армении”, 1923, N 2, с. 26.

1912-1914 թթ. Երևանի նահանգից արտագնացության դիմածների 37.5%-ը մնացել է նահանգի սահմաններում, 5%-ը մեկնել է արտասահման, իսկ մնացած մասն աշխատանքի է մեկնել Բաքու, Թբիլիսի, Գրոզնի և այլն³:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Հայաստանը, լինելով ռազմական գործողությունների թատերաբեմերից մեկը, ոչ միայն տվեց մարդկային մեծ զոհեր, այլև հիմնովին քայքայվեց նրա առանց այն էլ թույլ զարգացած տնտեսությունը:

Միջազգային բարդ իրադրության պայմաններում հնարավոր չլինելով ստեղծել շատ թե քիչ տանելի տնտեսական կյանք, Հայաստանի առաջին հանրապետության պառլամենտում անընդհատ դժգոհություններ էին լսվում՝ պետության վրա բեռ դարձած օրավուր աճող անաշխատ սպառողների ու «անգործների բանակի» մասին: Կառավարության մի հաղորդումից պարզվում է, որ 1919-1920թթ. 547375 մարդ գտվում էր նպաստի, հագուստի և բնակարանի կարիքի մեջ⁴:

Հայաստանի առաջին հանրապետության գոյության ժամանակաշրջանի բնակչության զբաղվածության և տեղաշարժի հարցերը հանգամանալից քննարկված են վիճակագիր Ջ. Կորկոտյանի⁵ և ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի աշխատություններում⁶, ուստի հարկ չենք համարում անդրադառնալ այդ հարցին:

Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո աշխատուճակ բնակչությանն աշխատանքով ապահովելու գործում զգալի նշանակություն ունեցավ Հեղկոմի և Հողժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 28-ի՝ հողերի ազգայնացման մասին դեկրետը:⁷ Սակայն անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում հողերի ազգայնացումը չտվեց այն արդյունքը, ինչ մյուս հանրապետություններում՝ խոշոր հողատիրության բացակայության պատճառով, ուստի այն ուներ ավելի շատ քաղաքական, քան տնտեսական նշանակություն:

Հանրապետության սակավահողության պատճառով գյուղական վայրերում ապաստանած ավելի քան 126500 գաղթականներից 1923 թ. հողաբաժին էին ստացել միայն 49 հազարը⁸:

Հայաստանում իրագործվող ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որի հիմնական սկզբունքը բռնագրավումներն էին, հույս չէր ներշնչում գյուղացիներին ստացած հողը մշակելու համար: Ուստի, Հեղկոմի 1921թ. ապրիլի 10-ի դեկրետով բռնագրավումից ազատ էր համարվում սերմացուն, միաժամանակ ընդգծվում էր, որ ցանքերից ստացվող բերքն ամբողջովին պատկանում է տիրոջը և ենթակա չէ բռնագրավման⁹: Սա փաստորեն ռազմական կոմունիզմի քա-

³ Տե՛ս **Վ. Խոջաբեկյան**, նշվ. աշխ., էջ 68-69:

⁴ Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1980 N 2, էջ 98:

⁵ **Ջ. Կորկոտյան**, ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Երևան, 1929; Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Երևան, 1932:

⁶ **Վ. Խոջաբեկյան**, նշվ. աշխ., ինչպես նաև Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2001:

⁷ Տե՛ս, ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջմիածին, 1921, էջ 31:

⁸ Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ 123, ց. 42, գ. 21, թ. 8:

⁹ ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ II, էջմիածին, 1921, էջ 12-13:

ղաքականությունից հրաժարվելու ուղղությամբ առաջին միջոցառումն էր, որը բարերար ազդեցություն ունեցավ մենատնտես գյուղացիության վրա՝ նպաստելով նրա արտազնացության սահմանափակմանը:

Հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները և դրանց պատճառած լրացուցիչ դժվարությունները, քայլ առ քայլ հրաժարվելով ռազմական կոմունիզմի քաղաքականությունից, 1921 թ. հունիսի 24-ին ՀԽՍՀ ժողկոմխորին ընդունեց «Պարենտուրքի մասին» դեկրետը, որով սկսվեց նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) կենսագործումը Հայաստանում:

Անցնելով ՆԷՊ-ին, որը լայն հնարավորություններ էր ընձեռում մանր արտադրության զարգացմանը, միջոցներ մշակվեցին ներգաղթի և գյուղի շերտավորման հետևանքով աճող ագրարային գերբնակչության դեմ պայքար մղելու համար:

Հայկոմկուսի II համագումարը (1923 թ. մարտ) անդրադառնալով գյուղում տարվող աշխատանքներին, ընդգծում է, որ մեծ չափերի է հասնում սակավահողությունը: Այն լեռնային շրջաններում կազմում է 50, իսկ հարթավայրային շրջաններում՝ 30%:¹⁰

Հողի, աշխատանքային գործիքների և քաշող ուժի պակասը հաճախ գյուղացուն հարկադրում էր գոյության միջոց որոնել տնտեսության մյուս ճյուղերում:

Հայաստանում արտազնացությունը մեծ չափերի է հասնում հատկապես 1924/1925 տնտեսական տարում՝ կապված ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքների և քաղաքներում տնտեսական ու մշակութային կյանքի աստիճանական բարելավման հետ:

1924/25 և 1925/26 թթ. ոչ լրիվ տվյալներով* արտազնացությունը գյուղական վայրերից ուներ հետևյալ տեսքը¹¹:

Գավառներ	Տնտեսական տարի	
	1924/25	1925/26
Երևանի	3267	449
Լեւոնականի	3784	4692
Լոռի-Փամբակի	1346	140
Դիլիջանի	6533	5870
Նոր-Քայազետի	5097	573
Ձանգեզուրի	1904	1992
Դարալագյազի	442	997
Սեղրիի	195	105
Էջմիածնի	1114	3865
Ընդամենը	23682	18593

¹⁰ ՀԱԱ, ֆ 1, ց. 2, գ. 2, թ. 66-67:

* ՀԽՍՀ կենտրոնականի վարչության 1924/25 թ. հարցման ենթարկված 1167 գյուղերից պատասխանել էին 580-ը, իսկ 1925/26թ.՝ գյուղերի 75%-ը (այդ մասին տես ՀԱԱ ֆ. 120, ց.1, գ. 354, թ. 89 և նույն տեղում ֆ. 65, ց. 4, գ. 275, թ. 28):

¹¹ Աղյուսակը կազմված է ըստ ՀԱԱ ֆ. 120, ց. 1, գ. 36, թ. 72 և նույն տեղում ֆ. 65, ց.4, գ. 235, թ. 28-ի տվյալների:

Սակայն, մեր կարծիքով, արտագնացությունն իրականում ավելի մեծ չափերի է հասել, քան վերը բերված տվյալներն են: Այսպես, օրինակ, 1926 թ. հուլիսի 15-ին Անդրերկրյանի քարտուղարությունը լսում է Ջանգեզուրի Գավկոմի քարտուղար Պ. Մկրտչյանի զեկուցումը, որտեղ վերջինս այն միտքն է հայտնում, որ Ջանգեզուրի գավառից 1925/26 թ. Բաքու և Գրոզնի են մեկնել 10000 գյուղացիներ¹²: Ճիշտ է, նշված թիվը կարող է չափազանցված լինել, սակայն հիմք է տալիս ենթադրելու, որ Ջանգեզուրից 1925/26 թ. արտագնացության են դիմել ոչ թե 1992 մարդ, այլ անհամեմատ ավելի շատ: Նույնը կարելի է ասել նաև մյուս գավառների վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ արտագնացների ամբողջ բանակը քաղաք չէր մեկնում: Նրանց մի մասը բատրակություն էր անում հարևան շրջանների կուլակային տնտեսություններում: Այդուհանդերձ, ագրարային գերբնակչությունն այն հորդառատ աղբյուրն էր, որն անընհատ լրացնում էր քաղաքի գործազուրկների շարքերը: Մյուս կողմից, ոչ բոլոր արտագնացներն էին, որ իրենց կյանքը մեկընդմիջտ կապում էին քաղաքի հետ: Նրանց մի մասը սեզոնային աշխատանքներն ավարտվելուց հետո վերադառնում էր գյուղ: 1924/25 և 1925/26 թթ. Հայաստանից արտագնացության դիմած 42275 մարդուց գյուղ չէին վերադարձել 18425-ը, այսինքն նրանց հիմնական մասը դարձել էր բանվոր¹³:

Ագրարային գերբնակչության խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մեջ առանձնահատուկ նշանակություն ունեւր վերաբնակեցումների քաղաքականությունը: 1922 թ. Ղարաքիլիսայի (Վանաձոր) շրջանից Բասարգեչարի (Վարդենիս) շրջանում վերաբնակեցվում են 2757, 1924-1925թթ. Լոռու գավառից Լենինականի (Գյումրի) գավառում՝ 920 և Դիլիջանի գավառից Բասարգեչարի շրջան՝ 275 հողազուրկ գաղթականներ¹⁴: Նոր բնակավայրերում բացի հողից նրանց տրամադրվում են լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ, ինչպես նաև երկարատև վարկ, որոշ ժամանակ ազատելով հարկերից: Քանի որ Հայաստանի սակավահողության պայմաններում բոլորին հնարավոր չէր ապահովել հողով, ՀԽՍՀ Կենտգործկոմն, ընդառաջելով բազմաթիվ գյուղացիների և գաղթականների խնդրանքներին, դիմում է Համառուսաստանյան Կենտգործկոմին՝ Հյուսիսային Կովկասում հայ գյուղացիության համար հող հատկացնելու¹⁵: Սակայն այս և հետագա միջնորդությունները ցանկալի ընթացք չստացան:

1927 թ. մայիսին ԽՍՀՄ Կենտգործկոմին կից վերաբնակեցման համամիութենական կոմիտեն քննարկեց Հայաստանի վերաբնակեցման աշխատանքների հնգամյա պլանը: Կոմիտեն Հայաստանը ճանաչեց խիստ սակավահող հանրապետություն և որպես նրա հավելյալ բնակչության տեղավորման միջոց ընդունեց արդյունաբերության զարգացումը՝ եթե ոչ առաջիկա, թերևս հաջորդ հնգամյակներում: Նախատեսվում էր հայերի հայրենադարձությունը և Հայաստանի սահմաններում կատարվող վերաբնակեցումը (դեպի արդյունաբերության զարգաց-

¹² ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 67, д. 66, л. 133.

¹³ ՀԱԱ, ֆ. 120, ց. 1, գ. 354, թ. 90 և ֆ. 65, ց. 4, գ. 275, թ. 35:

¹⁴ Խորհրդային Հայաստանը 1920-1925թթ., Երևան, 1926, էջ 69:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 120, ց. 42, գ. 38, թ. 8:

ման կենտրոններ) ճանաչել որպես միութենական նշանակություն ունեցող ձեռնարկումներ և համապատասխան ծախսերը նախատեսել միութենական բյուջեով¹⁶:

Նույն կոմիտեի 1927 թ. հուլիսին կայացած պլենումը քննարկելով Հայաստանի գաղթական բնակչության բնակեցման և սակավահողության վերացման հարցը, դրա լուծումը համարեց անհետաձգելի գործ, որպես միութենական միջոցառում¹⁷:

Առաջին հնգամյա պլանով հանրապետությունում նախատեսվում էր 10505 ընտանիքների վերաբնակեցում, որի համար պետք է հատկացվեր 58990 հեկտար հողատարածություն¹⁸: Փաստորեն, վերաբնակեցման և գյուղացիությանը հողով ապահովելու աշխատանքները պետք է ավարտվեին առաջին հնգամյալի վերջում:

1920-ից մինչև 1930 թ. հողաբաժնով ապահովվեց 91,7 հազար մարդ, որը մեծ չափով նպաստեց արտագնացության կրճատմանը¹⁹:

Հանրապետությունում ՆԷՊ-ի կենսագործման շնորհիվ տարեցտարի ընդարձակվում էին ցանքատարածությունները, որը բնականաբար նպաստում էր ագրարային գերբնակչության կրճատմանը: Հնարավորություն չունենալով պետության կողմից տալ նշանակալի օգնություն, կառավարությունը դիմեց փոխադարձ օգնություն կազմակերպելու գաղափարին:

1922 թ. օգոստոսի 9-ի ժողկոմխորհի դեկրետով հանրապետությունում կազմակերպվում են փոխադարձ օգնության գյուղացիական կոմիտեներ (ՓՕԿ)²⁰: Դրանց նպատակն էր գյուղի աշխատավոր և չքավոր տարրերին տալ նյութական և բարոյական օգնություն, վերականգնել նրանց տնտեսությունը²¹: 1923/24 թ. Հայաստանում արդեն գործում էին 994 այդպիսի ընկերություններ, որոնք այդ ընթացքում օգնություն էին ցույց տվել ավելի քան 59000 ընտանիքի²²:

Նկատենք, որ գյուղացիության դրության բարելավման գործում մեծ նշանակություն ուներ նաև այդ ժամանակ վարվող հարկային քաղաքականությունը²³:

Հայաստանի գյուղական բնակչության արտագնացության վերաբերյալ աղբյուրներն ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ ինդուստրացման առաջին տարիներին, տալիս են տարբեր տվյալներ: Ըստ հանրապետության Պետպլանի

¹⁶ Տե՛ս **Վ. Ղազարեցյան**, Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006, էջ 279:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ **Մ. Սահակյան**, ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը (1928/29-1932/33 թթ.) էջ 22:

¹⁹ **Վ. Խոջաբեկյան**, նշվ. աշխ., էջ 212:

²⁰ ՀԽՍՀ դեկրետների և որոշումների ժողովածու, 1922, N 15, էջ 174-175:

²¹ Փոխադարձ օգնության գյուղացիական ընկերությունների կանոնադրություն, Ե., 1924, էջ 3:

²² ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 330, թ. 45:

²³ Այդ մասին մանրամասն տես **Գ. Գեղամյան, Բ. Թևոսյան**, Հարկային քաղաքականությունը գյուղում 1920-ական թվականներին, «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1989, N 9, էջ 38-48:

1927 թ. “Экономический вестник ССР Армении” - ում հրատարակված տվյալների, 1926/27 թ. արտագնացների թիվը կազմել է 65000 մարդ, նույն Պետպլանի մեկ այլ վավերագրում (1926 թ. մարդահամարի նախնական տվյալներով)՝ 45000²⁴, իսկ Հայաստանի արհեստակցական միությունների տվյալներով՝ 19926 մարդ²⁵:

Այս երեք տվյալներից, մեր կարծիքով, նախապատվությունը կարելի է տալ երկրորդին՝ 1926 թ. մարդահամարի նախնական տվյալին: Առաջին տվյալն, անշուշտ, չափազանցված է, իսկ երրորդը վերաբերում է միայն արհմիության անդամ արտագնացներին, որը, բնականաբար, ամբողջական չի եղել չի կարող:

Այս փուլում ագրարային գերբնակչությունը կրճատելու և քաղաքում գործազրկության դեմ պայքարելու համար, ինդուստրացման հետ միասին, կարևոր միջոց է համարվում տնայնագործական արդյունագործության, հատկապես կոոպերատիվ սեկտորի զարգացումը²⁶: Արդեն 1927-1928 թթ. մանր տնայնագործական արտադրության զանազան ճյուղերում զբաղված էր 26527 մարդ, որից 16303-ը՝ գյուղական վայրերում²⁷:

Հանրապետությունում ծավալված շինարարությանը պլանաչափ բանվորական ուժ մատակարարելու, գյուղացիության հոսքը դեպի քաղաք կանոնավորելու նպատակով 1928 թ. երկրորդ կեսին հանրապետությունում կազմակերպվում են ցուցակագրման երեք կայաններ՝ Սարդարապատում, Քոլագերանում և Արզնիում: Նույն ժամանակ հանրապետության գրեթե բոլոր գյուղական խորհուրդներին կից ստեղծվում է թղթակից-ինֆորմատորի հաստիք, որն արտագնաց գյուղացիների շրջանում բացատրական աշխատանքներ է տանում՝ նրանց տեղեկացնելով աշխատանքի շուկայի վիճակի, շինարարական աշխատանքների համար պահանջվող աշխատուժի քանակի և ժամանակի մասին, որի նպատակն էր կանխել վաղաժամ արտագնացությունը²⁸:

1928/29 տնտեսական տարում ցուցակագրման կայաններում աշխատանքի առաջարկը եղել է 5633, պահանջարկը՝ 6203, աշխատանքի է ուղղարկվել 5647 մարդ, կամ բավարարվել է պահանջարկի 91.4 %-ը²⁹:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ ցուցակագրման այդ երեք կայանները չէին կարող ընդգրկել հանրապետության արտագնաց գյուղացիության ամբողջ բանակը: Նախ, դրանք բացվել էին ոչ թե այն վայրերում, որտեղից արտագնացությունը մեծ չափերի էր հասնում (գրեթե բոլոր աղբյուրներում նշվում են լեռնային շրջանները, հատկապես Ջանգեզուրն ու Նոր Բայազետը), այլ այն վայրերում, որոնք մոտ էին ծավալվող շինարարության հիմնական օբյեկտներին (Ձորագետ, Քանաքեռգետ և այլն): Եվ երկրորդ, չնայած ձեռնարկված միջոցառումներ-

²⁴ Տե՛ս **Վ. Ղազախեցյան**, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929, Երևան, 1975, էջ 273:

²⁵ ՀԱԱ, ֆ. 65, ց. 4, գ. 275, թ. 65:

²⁶ ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 5, թ. 137:

²⁷ ՀԱԱ, ֆ. 120, ց. 4, գ. 148, թ. 20:

²⁸ Նույն տեղում, ց. 1, գ. 67, թ. 83:

²⁹ Նույն տեղում:

րին, շարունակվում էր գյուղացիության ինքնական արտագնացությունը³⁰: Բ. Մարկուսի տվյալներով երկրում (ԽՍՀՄ-ում - Բ. Թ.) արտագնացների միայն 11%-ն էին կազմում հավաքագրվածները, իսկ մնացած մասը գնում էր ինքնահոսի, անկազմակերպ ձևով³¹:

Արդյունաբերության և շինարարության բուռն զարգացման պայմաններում աճում է բանվորական ուժի պահանջը: Ինչպես Միության մեջ, այնպես էլ Հայաստանում, ամենից առաջ, չնայած շինարարության մեջ զբաղվածության բավական աճին, զգացվեց շինարարական բանվորների խիստ պակաս: Այսպես, եթե 1928 թ. շինարարության մեջ զբաղված էր 6088 մարդ, 1929 թ.՝ 9592, ապա 1930 թ. այդ թիվը հասավ 17000³²: Սակայն 1928/29 տնտեսական տարում, աշխատանքի առաջարկը շինարարության խմբում կազմում էր 5754 մարդ, պահանջարկը՝ 9263³³, իսկ 1929/30 տնտեսական տարում՝ 15821 պահանջարկի դիմաց կար ընդամենը 5065 առաջարկ³⁴:

1928-1929 թթ. բեկունային դարձան խորհրդային իշխանության քաղաքականության համար: Եթե մինչ այդ երկրի զարգացումը կազմակերպվում էր ՆԷՊ-ի հիման վրա, ապա այժմ քաղաքականությունը, առաջին հերթին տնտեսականը, կտրուկ փոխվեց: Փաստորեն վերադարձ կատարվեց դեպի «ռազմական կոմունիզմ»: Առիթը՝ 1928 թ. երկրում առաջացած հացամթերման դժվարություններն էին: ՆԷՊ-ի մասին Ստալինը հետևյալ կարծիքին էր. «Մենք ՆԷՊ-ի կողմնակից ենք այն պատճառով, որ այն ծառայում է սոցիալիզմին, իսկ երբ այն դադարի սոցիալիզմի գործին ծառայելուց, մենք նրան գրողի ծոցը կուղարկենք»³⁵: Ըստ Ստալինի՝ արդեն եկել էր այդ ժամանկը:

Գյուղատնտեսության ակնառու հետ մնալը արդյունաբերությունից թույլ տվեց Ստալինին ագրարային սեկտորը հայտարարել երկրում տիրող ճգնաժամի գլխավոր և հիմնական մեղավորը: Այդ գաղափարը մասնավորապես նա զարգացրեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. ապրիլին կայացած պլենումում: Գյուղատնտեսությունն անհրաժեշտ էր հիմնովին վերակառուցել, որպեսզի այն հասնի ինդուստրիալ սեկտորի աճի տեմպերին: Ըստ Ստալինի գաղափարի, վերակառուցումը պետք է լինի ավելի արմատական, քան այն նախատեսված էր հնգամյա պլանով:

Ստալինի կարծիքով, տազնապալից դրությունը գյուղատնտեսության մեջ, որը հանգեցրեց հացամթերման վերջին կոմպանիայի ձախողմանը, պայմանավորված էր կուլակների և թշնամական մյուս ուժերի գործունեությամբ, որոնք ձգտում էին «խորհրդային կարգերի քայքայմանը»: Ընտրությունը պարզ էր՝ «կամ

³⁰ Նույն տեղում:

³¹ *Б. Маркус*, Труд в социалистическом обществе, М., 1939, с. 153.

³² Մեր նվաճումները: ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության աճի հիմնական ցուցանիշները առաջին հնգամյակում և երկրորդ հնգամյակի առաջին տարում, բաժին II, աղյուսակ N 2, Ե. 1934:

³³ ՀԽՍՀ աշխատանքը և արդյունաբերությունը 1926/27-1928/29թթ. Ե., 1930, էջ 94:

³⁴ ՀԱԱ, ֆ. 120, ց. 1, գ. 67, թ. 99:

³⁵ Մեջբերումն ըստ Վ. Ղազախեցյան, Հայաստանը 1920-1940թթ., էջ 379:

գյուղական կապիտալիստները, կամ կոլտնտեսությունները»: Այժմ խոսքը գնում էր ոչ թե հնգամյա պլանի կատարման, այլ այն մի քանի անգամ գերակատարելու մասին: Ընդունված պլանը ենթարկվեց բազմաթիվ սրբագրումների, հատկապես կոլեկտիվացման բնագավառում: Սկզբից նախատեսված էր հնգամյակի վերջում հանրայնացնել 5 մլն գյուղացիական տնտեսություն (ամբողջ ԽՍՀՄ-ում - Բ. Թ.): 1929 թ. հունիսին Կոլտնտկենտրոնը հայտարարեց 8 մլն տնտեսություն կոլեկտիվացնելու անհրաժեշտության մասին միայն մեկ տարում՝ 1930թ., և գյուղական բնակչության կեսը՝ մինչև 1933 թ: Օգոստոսին՝ Ա. Ի. Միկոյանը արդեն խոսում է 10 մլն, իսկ սեպտեմբերին նպատակ դրվեց նույն 1930 թ. 13 մլն տնտեսության հանրայնացման մասին: Դեկտեմբերին այդ թիվը բարձրացավ մինչև 30 մլն.³⁶:

Համատարած կոլեկտիվացման կուրսն իր ազդեցությունը թողեց գյուղական բնակչության միգրացիայի վրա, որը պայմանավորված էր ոչ միայն նրանով, որ առաջին հերթին կոլտնտեսություն էին մտնում չքավորներն ու բատրակները, որոնք կազմում էին արտագնացների հիմնական մասը, այլև նրանով, որ կոլեկտիվացմամբ գյուղացին ամրացվում էր հողին: Գյուղացին զրկվեց ազատ տեղաշարժելու, իր աշխատուժը տնօրինելու իրավունքից: Նա չունեց անձնագիր, առանց կոլտնտվարչության և գյուղական խորհրդի թույլտվության չէր կարող բացակայել գյուղից, երկար ժամանակ գտնվել այլ վայրում:

Կոլտնտեսությունների վարչությունները արգելում էին արտագնացությունը, նույնիսկ ձեռնարկում էին վարչական միջոցներ, ընդհուպ՝ կոլտնտեսությունից հեռացնելը, անասուններին արոտավայր չթողնելը, տնամերձ հողամասից զրկելը և այլն: Այդ քայլերը բացատրվում էին իբր գյուղարտադրությունը աշխատուժով չապահովելու մտավախությամբ:

Գյուղից քաղաք արտահոսքի տեմպերի նվազման պատճառով սեզոնային բնույթ ունեցող շատ ճյուղերում աշխատուժի պահանջն այլևս չէր բավարարվում:

1928/29 տնտեսական տարում շինարարության մեջ աշխատողների պահանջարկը կատարվեց 88,2%-ով, 1929/30 տնտեսական տարում՝ 53,8%-ով³⁷: Հանրապետության կառավարությունը, շինարարությունը բանվորներով ապահովված չլինելու պատճառով, ստիպված էր երկարացնել աշխատանքային օրվա տևողությունը³⁸:

Գյուղացիության արտագնացության դեմ պայքարը տեղերում այնպիսի ծայրահեղության հասավ, որ ԽՍՀՄ կառավարությունը, ելնելով ժողովրդական տնտեսության համաչափ զարգացման շահերից, 1930 թ. մարտի 16-ին հատուկ որոշում ընդունեց գյուղացիության արտագնացությունը չարգելելու մասին: Դրվեց գյուղացիության տարերային արտագնացությունը՝ գյուղում բանվորական ուժերի կազմակերպված հավաքագրմամբ փոխարինելու խնդիրը: Այդ խնդրի կատարումը լրացուցիչ հնարավորություններ էր ստեղծում քաղաքում գործազրկության խնդրի լուծման համար: Նոր պայմանները աշխատանքի մարմինների

³⁶ *Н. Верт*, История Советского государства, М., 1998, с. 207.

³⁷ ՀԱԱ, ֆ. 120, ց. 1, գ. 67, թ. 99:

³⁸ Նույն տեղում, թ. 107:

առջև խնդիր դրեցին ընդարձակելու միջնորդ մարմինների ցանցը: 1930 թ. ապրիլին հանրապետության գյուղական վայրերում կազմակերպվում են ևս չորս ցուցակագրման կայաններ՝ Արթիկում, Դավալուում (Արարատ), Ելենովկայում (Սևան) և Դափանում (Կապան)³⁹: 1929/30 տնտեսական տարվա ընթացքում ցուցակագրման կայանների և գյուղական վայրեր գործուղված հատուկ հավաքագրողների միջոցով աշխատանքի էր ուղարկվել 20942 մարդ⁴⁰:

Չնայած բանվոր դասակարգի թվի արագ աճին, արդյունաբերությունը և շինարարությունը, ինչպես նաև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը, արդեն հնգամյակի երկրորդ տարում մշտապես զգում էին բանվորական ուժի կարիք: Եթե աշխատուժի առաջարկը 1928/29 թ-ից մինչև 1929/30թ-ը աճել էր 23,6%-ով, ապա պահանջարկը այդ նույն ժամանակաշրջանում աճել էր 76%-ով⁴¹: Հանրապետության աշխատանքի մարմինները ի վիճակի չէին բավարարելու աշխատուժի աճող պահանջները, 1928/29 թ. պահանջարկը բավարարվեց 91,2%-ով, իսկ 1929/30թ. 68,4%-ով⁴²:

Բանը նրանում էր, որ արտադրությունը ներկայացնում էր որակյալ բանվորական ուժի պահանջ, իսկ աշխատանքի առաջարկ ներկայացնողների գերակշիռ մասը կազմում էին որևէ մասնագիտական որակավորում չունեցողները:

Ստեղծված պայմաններում անհրաժեշտ էր շտապ կերպով տեղերում լուծել որակյալ կադրերի պատրաստման խնդիրը: Արդեն առաջին հնգամյակի առաջին տարիներին այդ ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ: Որակյալ բանվորական ուժ պատրաստելու հիմնական ձևերը հանդիսացան ֆաբրիկա-գործարանային, ինչպես նաև զանգվածային մասնագիտության դպրոցները, որոնց ցանցի ընդարձակումը վերջին հաշվով պետք է նպաստեր երիտասարդության շրջանում գործազրկության վերացմանը: Ըստ Հայաստանի աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի տվյալների՝ 1929թ. հանրապետությունում գործում էին 5 ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ, որոնցում սովորողների թիվը կազմում էր ընդամենը 260 մարդ: 1930թ. դրանց թիվը հասնում է 7-ի՝ 1289 աշակերտներով, իսկ 1931թ. գործում էին ֆաբրործուսի, շինուսի և սովխտզուսի 20 դպրոցներ, որտեղ սովորում էին 3432 աշակերտ⁴³: Գյուղական շրջաններից, փաստորեն, վարչական միջոցներով արգելելով սևագործ և որակավորում չունեցող աշխատուժի արտագնացությունը, խրախուսվեց գյուղական երիտասարդության կազմակերպված հավաքագրումը ու նրանց մասնագիտական որակավորում տալը: Բավական է նշել, որ առաջին հնգամյակի տարիներին ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության ճյուղերում ընդգրկված նոր բանվորների 70%-ը կազմում էին գյուղից հավաքագրված երիտասարդները⁴⁴:

³⁹ ՀԱԱ, ֆ. 120, ց. 1, գ. 67, թ. 99:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ ՀԱԱ, ֆ. 120, ց. 1, գ. 67, թ. 97-99:

⁴² Աշխատանքը և արդյունաբերությունը ՀՍՄ-ում, էջ 88:

⁴³ **Հ. Ս. Կարապետյան**, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը, Ե., 1980, էջ 89-90:

⁴⁴ Итоги выполнения первого пятилетнего плана народного хозяйства СССР, с. 74.

Այսպիսով, իհարկե, չի կարելի ասել, որ գյուղատնտեսության կոլեկտիվացմամբ լուծվել էր ագրարային գերբնակչության հարցը, ինչպես այդ հայտարարում էին Խորհրդային իշխանության ներկայացուցիչները: Չնայած այն բանին, որ գյուղացին կոլտնտեսային աշխատանքներում զբաղված էր մասնակիորեն, որոշ տվյալներով 1931թ. ԽՍՀՄ մասշտաբով կոլտնտեսությունները տարեկան աշխատել են 6–8 ամիս⁴⁵, սակայն գյուղացին զրկված էր իր աշխատուժը տնօրինելու իրավունքից, որը շարունակվեց տասնամյակներ: Ձեռնարկված միջոցառումները հիմնականում մեղմեցին ագրարային գերբնակչության խնդիրը:

ПРОБЛЕМА АГРАРНОГО ПЕРЕНАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В 1920-1930-Х ГГ.

Б. М. Тевосян

Одной из трудных задач, возникших перед правительством Советской Армении в 1920-е годы был вопрос об аграрном перенаселении, решение которой осложнялось в силу недостатка земли в республике и проявлялось в основном миграцией.

Миграция в Армении достигла больших размеров в особенности в годы индустриализации. Однако необходимо указать, что промышленность нуждалась в качественной рабочей силе, а большая часть мигрирующих не имела квалификации. По этой причине был поставлен вопрос обучения качественных кадров. Советское правительство коренное решение вопроса об аграрном перенаселении видело в коллективизации сельского хозяйства, что мешало крестьянина свободного передвижения и права распоряжения своей рабочей силой. Несмотря на то, что крестьянин в колхозе был занят на протяжении 6-8 месяцев, он был лишен паспорта, и не мог покидать деревню. А Советское правительство объявляло всему миру о ликвидации проблемы аграрного перенаселения и безработицы, что не соответствовало действительности.

THE PROBLEM OF AGRARIAN OVERPOPULATION IN ARMENIA IN 1920-1930

B. M. Tevosyan

In 1920 one of the problems facing the government of the Soviet Union was the problem of agrarian overpopulation which was getting serious in the conditions of scarce land area and caused migration.

One of the solutions to that problem was the policy of developing handicraft in villages and establishing mutual peasant assistance committee and so on.

Migration increased in Armenia especially during the years of industrialization when new industrialized enterprises were established in cities.

It must be noted that skilled labor was demanded by those enterprises and migrating people were mainly unskilled. So, collectivization of agriculture started. The peasant was deprived of free mobility.

Administrative measures were taken to struggle against migration. In spite of the fact the peasant worked in collective farms for 6-8 months, he had no passport and was not able to leave the village.

Meanwhile the Soviet government made false statement to the world that the unemployment digressed in the country.

⁴⁵ “Вопросы труда”, 1932, № 3, с. 35.